մարձակ, չափով են անում, կողոպտում և տանում են ամեն ինչ. ով կարա խօսայ։ Օրերով պահում ենք ըտոնց, մեր ամենալաւ գառները մորթում, մեր ամենաընտիր օղչարները, հաւերը նրանց ենք տալիս, որ բալքի (գոնէ) մեր երեխանց, մեզ ձեռք չտան։ Ըտէնց ենք ապրում եղբայր, էգուանից մինչև իրիկուն բանի ենք կենում, չարչարում, բայց էլի մենք մեր զատի տէրը չենք, էլի մեզ օնչինչ չեն թողնում, անխնայ կողոպտում են, էդ է մեր ապրելը, բայց էդ էլ ապրել չէ, այլ տանջանք է եղբայր, տանջանք . . .

Այս տխուր պատկերի վրայ աւելացնենք սիրելիս և՝ այն, որ այս տարւայ երաշտի պատճառով ցանքսերը, խոտահարքերը կիսով չափ այրւել, փչացել են։ Գիւղացիները ոչ ուտելու պաշար ունեն, ոչ էլ սերմացու, նրանք կանգնած են սովի ճանկերում, որին այս տարի (1918) զոհ են գնացել 100 հոգի։

Այսպէս, ներկայումս Բոլորանի հայ գիւղացիութիւնը տնտեսապէս քայքայւած դրութեան մէջ է գտնւում։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	450
2	Զուննոր	100
3	Միջակ	120
4	Ունեոր	80
5	Հարուստ	70
	Ընդամենը	820

ՀԱԶԱՐՋՐԻԲ

—

Բոլորանից դէպի հարաւ-արևմուտք, կէս ֆարսախ հեռաւորութեամբ, մի բլրի վրայ փռւած է Հազարջրիբը, որ ունի բարձր և գեղեցիկ դիրք. գիւղի առաջ փռւած են արտերը, իսկ հարաւային տարածութիւնը զարդարւած է ուռենիների և բարդիների տնկարաններով, որոնք գիւղին տալիս են բանաստեղծական տեսք։ Բայց գիւղի զարդը կազմում է մի առու. դա բղխում է նոյն ակից, ինչ որ Բոլորանին ևս բղխում է և անցնում նախ Հազարջրիբ, յետոյ թեքւելով դէպի արև-